

ի մէջ աշդոցիկ պատմագրաց առաջին հարկաւորն է շապուհ բազրատունի: Երկրորդ Զաքարիա և Խորեն, երրորդ՝ Մխիթար և վանական, 4-րդ՝ Ուխտանէս, Խոսրով և Ղևոնդ: Հինգերորդ՝ Սմբատ, Թովմաս, և Մովսէս, վեցերորդ, Սարկա-

ւազ, Համամ, և ապուսահչ: Ընդ այս և Թովմա արծրունի, զորոյ գանկատար գործն միայն ունիմք:

յիսկական բնագրոյն ուղիղ օրինակեցի  
Յարութիւն Թ. Յարութիւնեանց

ԱՍԻՐԴՈՒԿԱԹ ԲԺՇԿԻ

“ԱՆԳԻՏԱՅ ԱՆՊԷՏ,” Ի ՍԻ ՆՈՐ ՁԵՈԱԳԻՐ



Երևանում մի մասնաւոր մարդու մօտ կայ Ամիրդովաթ բժշկի « Անդիտաց անպետ » աշխատութիւնը, որը պատահմամբ ընկաւ ձեռքս և որի հետ ծանօթացայ սրանից մի քանի ամիս առաջ:

Յիշեալ բառարանը կազմած մեծ գիրք է բաւականին լաւ վիճակի. զբքի հաստութիւնը (առանց կազմի) 4 սնյմ., երկարութիւնը 32 սնյմ., լայնութիւնը 22 սնյմ., իւրաքանչիւր էջը երկու սիւնակից. մէկ սիւնակում 45 տող. էջադրութիւնը Թանաքով և մատիտով կատարուած է ուրիշ ձեռքով. ընդ ամէնը 405 էջ: Գրուած է թղթի վրայ, նոտրագիր է:

Բժշկական բառարանը սկսուած է Ա-ից և այբբենական կարգով հասնում է Պ տառին, բունում է 286 էջ, որի վերջին գրուած է « և Քրիստոսի փառք յաւիտեանս ամէն »:

Դրանից յետոյ յայտնի չէ ով աւելացրել է մի քանի բառ, 2 էջ. յետոյ 4 էջ դատարկ է և 293 էջից սկսուած է Ամիրդովաթի յառաջարանը:

Բոլոր բառերի թիւն է 1530: 293-ըդ էջի նախաշաւղից յետոյ գրուած է.

« Ի ժամանակին թագաւորին իմայելոց ազգէ սարակինոսաց ի յազգէ հագաբու որ նուագեալ էր թագաւորութիւն յունաց և մայրաքաղաքին կոստանդնուպօլիս, որ անխախտ կեայ և անսասան այդ ճրիստոնեայքը որ ի յայդ բնակեալ

էր ի թագաւորութեան սուլթան մհհեմէդ խանին և կաթուղիկոս սուրբ էջմիածին տէր Սարգիսին և հայրապետութեան ի մայրաքաղաքին կոստանդինուպօլիսոյ տէր Նիկողայոսին և թ.ին հայոց ԹՃԲ և ի ոտն սուրբ Նիկողայոսի սքանչելագործ սուրբ հայրապետի թարգմանեցաւ գիրքս այս Ա. Ա. զղեղերուն զատուժին բազում զրենաց այլ ազգաց ձեռամբ մեղաւոր և անպիտան և անիմաստ բժշկին ամասիացի ամիրտովաթին որ կարդան կամ յարինականն յիշեն հայր մեղայիւ և Քրիստոս յիշէ զինքն ի միւս անգամ Գալստեան ամէն »:

« Եւ զայս շինեցաք և ըստուգեցաք շատ բառերով և պատմութիւններով որ կարդայ հեշտութեամբ յիմանայ և անգէտն չօգտի ի սմանէ. և անուանեցաք զայս զբոյս անուն անգիտաց անպէտ և պարտակիւմ գիտնաց և ծառայ ամենայն փիլիսոփայիցն. և

եղիր հետեղ իմաստութեան հետ եւ թէ լուսանիս բժիշկ ես անպէտ Լինիս գու գիտուն արա բանիս հետ եւ այս գրիս անուն անգիտաց անպէտ »:

Այս ոտանաւորից յետոյ յիշում է բրժիշկներին՝ սկսած մեծ Մխիթարից. . . յետոյ գրում է իր ճանապարհորդութեան մասին, մեկնում է համառօտիւ և մէկ տառով նշանակուած խօսքերը:

Մի այլ տեղում գրուած է.

« Եւ այլ ասե՛նք թէ յեր եղաւ այս գիրքս աշխարհարատ. Ա. պատճառն է. մէկ այն է որ ամենայն մարդ չկարէ բերական կարողալ և կամ արտաքին զբայանք որ զայս խրթին բաներս իմանալ յանոր համար եղաւ աշխարհարատ և Բ. պատճառն այն է որ այլ բաներ խառնեցաք որ ի տանկաց բառն զտաք և պիտանի էր այս բառերս մեզի վասն տանկաց ստացումն առնելու համար և Գ. պատճառն այն որ կայ այս գիրքս յարպերէն պարսկերէն հոռմերէն թուրքերէն որ այս գիրքս ի յայլ լեզուէ ի փոխել անոր համար շատ բառեր կայ այս գիրքս»:

Պատեղ ես հրատարում եմ մեր բանասէրների ուշադրութիւնը «ԹՃԲ» թւի վրայ որ է 902, աւելացնելով 551, կը ստանանք 1453 թ.:

Որքան մեզ յայտնի է (տ. հայր Յովնանանի Հետազոտ. նախն. ուսմկորէնի վրայ) Ամիրդովամթի յիշեալ աշխատութիւնը գրուած է 1482 թ.ին, մինչդեռ մեր տեսած ձեռագրի մէջ ԹՃԲ ցոյց է ապրիս 1453 թ.ականը, մի հարց ուր պէտք է հետաքրքրական լինի շատերի համար:

Մեր տեսած ձեռագրի վրայ ոչ մի տեղ չկայ յիշատակութիւն, ո՛վ է գրիչը և ի՞նչպէս է ընկել վերջին տիրոջ ձեռքը, պարզել չկարողացայ:

Չնայած իմ բազում խորհուրդներին և խնդիրներին, ձեռագրի տէրը չհամարձակեց նուիրել այդ ձեռագիրը պետական թանգարանին. մինչև անգամ վաճառել չկամեցաւ. թուում է ինձ, որ տէրը պահում է այդ ձեռագիրը բժշկութեան համար. օգտուում է նրանից և զանազան զիւղերում կամ գուցէ հէնց Երևանում բժշկում է հիւանդներին:

Ինչ վերաբերում է աշխատութեան մէջ ցոյց արուած բառերին, ես միանգամայն անկողրջ եմ համարում այստեղ յիշել զանազան բառերի մասին, քանի որ ընթերցողներին և մանաւանդ հետաքրքրողներին քաջ ծանօթ են դրանք. միայն թոյլ եմ տալիս հոգնայի մասին գրուածը

բերել այստեղ. « Որպէս հոխնան Բագաւրատ ի ձագէ ուսաւ, որ ձուկ շատ էր կերեր և լի էր եղեր փորն չէր կարեր թռչել և զնաց ի ծովուն ըուր առաւ. և կանուցողն ի նստատեղն եղիւր, և լուծում արաւ և զինչ որ կերեր էր ամէն ի փորուն ի դուրս եղաւ. Թեթեացաւ ու թուաւ և հոխնան այն ժամանակն եղաւ և գրեցին ի գիրքն »...

Երևան Բժ. Ա. Մուրմուս

Գ Ր Ա Կ Ա Ն

ՅՈՂՎՆԱՆՆԵՍ ՊԱՊԻՆԻ՝

ԿԵ

Ես կը յիշեմ գետ գետ աչքեր յորինուած Զուրբերուն մէջ հայեւացած խոտերէ. Իր բերբերն այնպիսի լոյս կը մեկնէր Արագութեան, որ կրկին ծնունդ առաւ սրտիս:

Ես կը յիշեմ ժողովոն հնուն՝ կենսալիր Որ թարմ խօսքերը կ'երգունէր նըկարէն, Սիրտտարփիկ կոյսի ժողովու ըսպիտակ Զբերողըւած դարողական պատերէ:

Բայց աւելի կը յիշեմ ձեռքը երկշոտ իմ բարբարոս զանգուրներէս պարուրուած. Թըթու խորտանքը կը թռչէր հեռուներս, Եւ ամէն շուշու լուծուած էր այն հըպուճին:

Պարկեշտիկ ոյժն ականակիտ աչքերուն (Զթեաղ ժպտին մէջ, Եւս աղուոր արցունքին) Արաշորոզեց զիս այն անդոյթ բարութեանց, Զոր թովչութեամբ մ'ամուլ մերժած էի ես:

1. Հեղինակն է «Պատմութիւն Քրիստոսի» աշխարհահռչակ գործին, որ շատ լեզուներով թարգմանուած է, և որուն հայերէնն ալ ահա լոյս կը տեսնէ մեր թարգմանութեամբ. — Իր այս տարի լոյս տեսած «Հաց ու Գին» գրքին և թարգմանեց ընտրանք» իր ոտանաւորին եւս ճաշակ ժը առաւ համար հայ ընթերցողին. — Այս «Գին» իր ապագայ կերն է, ինչպէս ճատագայ երկու աղէկները՝ իր եւս զաւակներն են. Վիոլա, (Մանրեակ), ձեռքստա (Բերկարեւի), և Բեհեմ (Գլխոյ, Թագուհի), իր կենը: